

ՆՈՐԱԾՆԻ ԽՆԱՍՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ ԱՂՁՆԻՔԱՅԱՅԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Ռ. Ա. ՆԱՅԱՊԵՏՅԱՆ

Մանկան խնամքին և դաստիարակությանը վերաբերող ավանդական ծեսերի ու սովորույթների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն ընտանեկան կյանքի կենցաղային մշակույթի, այլև որոշակի տիպի անհատակամության ձևավորման ու վերարտադրման, ազգային բնավորության ժառանգակամության տեսակետից: Այս առումով առանձնապես ուշագրավ են նորածնի խնամքին առնչվող արարողությունները, որոնցում խտացված են ժողովրդի դարավոր կենսափորձն ու պատկերացումները:

Աղձնիքում նորածնի խնամքը իրականացվում էր ինչպես սերնդեսերունդ փոխանցված հմտություններին ու ավանդույթներին, այնպես էլ դրանց անմիջականորեն առնչվող հավատալիքներին համապատասխան:

Խնամքի ամենակարևոր պայմաններից մեկը կրծքի կաթով կերակրելն էր: Նորածնին առաջին երկու օրը կուրծք չէին տալիս, որպեսզի խելոք լինի, այսինքն՝ ստամոքսը հարմարվի բնական կերին, կարողանա կերածը մարսել և հանգիստ քնել: Նախքան առաջին անգամ կերակրելը կուրծքը կթում և թափում էին, որպեսզի խեժը և դժվարամարս նյութերը մաքրվեն և անհարմարություն չպատճառեն նորածնին: Կաթն արգելվում էր թափել գետնին, լցնում էին բաժակի մեջ, խառնում տաք ջրի հետ և լցնում պատի ճեղքի մեջ, քարի տակ, այնպիսի տեղ, որ մարդու ոտք չկոխեր: Առաջին անգամ կուրծք տալիս նախ մի արծաթ կամ ոսկի էին քսում երեխայի շրթունքներին, որպեսզի «արծաթով կամ ոսկով բացվի բերանը», այսինքն՝ հարուստ մարդ դառնար: Կամ էլ հաց էին դնում բերանին, որպեսզի «դսմաթով լինի»: Նաև մեղր ու շաքար էին քսում շրթունքներին, որպեսզի քաղցրախոտ լինի: Մկզբում աջ կուրծքն էին տալիս, հետո՝ ձախը, որպեսզի մամուկն անփորձանք մնար: Աջը, ըստ ժողովրդական պատկերացումների, խոբիդդանշում էր հաջողությունը, փորձանքից հեռու մնալը:

Կրծքի կաթով երեխային կերակրում էին 1-3 տարի կամ մինչև մոր վերստին հղիանալը: Եթե մայրը կրծքի կաթ չէր ունենում, վարձու ծծմայր էին պահում: Կաթնագուրկ մոր երեխային կուրծք էին տալիս համատեղ ապրող տեղերի կանայք, իսկ եթե այդպիսիք չկային, ապա դրացիներից մի կին մինչև քառասունքը սնում էր մանկանը՝ մինչև վտանգաշատ շրջանը անցնելը: Այդուհետ սակավակաթ մայրերը երեխային տալիս էին այժի կաթ. ինչպես նաև կովի կաթ՝ դրան մեկ երրորդի չափով ջուր և մի կտոր շաքար խառնելով ու եռացնելով: Կրծքի կաթը չբավարարելիս կերակրել էին տալիս հարևանի հարսին: Կաթը շատ լինելիս կթում էին մոխրի վրա և լցնում թոնրի ակը, այլ բանի վրա կթել չէր կարելի, կարծում էին՝ կցամաքի: Ծննդկանի կրծքերը ճաքճքելու և թարախակալելու դեպքում պատրաստում էին հետևյալ միջոցները և քսում կրծքին ու շուրվ կապում. 1) *խքնի* կոչվող բույսի դեղին ծաղիկները, 2) *թեխուկ* կոչվող բույսը, 3) *փողիկ* փոփոջ բույսի կոճականման սերմերը մանրացնում էին և կովի կաթով եփում. դառնում էր ծամոճանման նյութ: Աղացած ձավարով

չլիա էին եփում առանց աղի: Հաջորդը՝ կարմիր գլուխ սոխը լավ մանրացրած եփում էին կտավատի ձեթի մեջ, ստացվում էր պինդ, մածուցիկ նյութ: **Տոքթիկ** կոչվող բույսի ծաղիկները և նրա մատղաշ փոքր տերևները աղում էին, մեկ գդալ մեղրի, մեկ գդալ կտավատի ձեթի հետ եփում շատ հանդարտ կրակի վրա: Մյուսը՝ քարախը դուրս հանելուց հետո եզան լեզուն կամ նրան նմանվող **ըխարի բուլը** աղում էին և կովի կաթով եփում, որը նույնպես դառնում էր ծամոնանման նյութ: Սպիտակ, չմանրած ձավարը լրիվ եփում էին այն աստիճան, որ դառնար խմորանման զանգված:

Ծննդկանի կաթը առատ դարձնելու համար տանում էին Կաթնաղբյուր կոչված սրբավայրեր, լողացնում և նույն սրբավայրի ջրով, քրջում էին տնից տարած հացն ու կերցնում ծննդկանին:

Աղջիկ երեխայի մոր կաթը բուժիչ էր համարվում աչքացավի, ականջացավի, վերքի բուժման համար: Կրծքից կտրելիս մուր, ցեխ, կամ պղպեղ էին քսում պտուկին: Եթե մոր կրծքից կտրված երեխան որոշ ժամանակ անց նորից սկսեր կուրծք ուտել, ասում էին, որ մեծանալիս չար աչք կունենա՝ «նրա աչքից սար ու քար կպատուվի»: Երեխայի լացը կտրելու համար շորի կամ քանգիֆի մեջ հացի հետ մի կտոր շաքար էին փաթաթում և դնում երեխայի բերանը, որ ծծի:

Երեխային մինչև քառասունքը լողացնում էին ամեն օր, երբեմն նաև օրը երկու անգամ, իսկ քառասունքից հետո խուսափում էին. մեղք էր համարվում չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերին լողացնելը: Դա բացատրվում էր նրանով, որ չորեքշաբթի և ուրբաթ պատ էին պահում, յուղ և միս չէին օգտագործում: Մինչև քառասունքը նորածնին լողացնում էին տաք ջրով և հարած ձու էին քսում գլխին ու մարմնին: Քառասունքից հետո ձվին փոխարինում էր օճառը՝ գիլ, որը թեև քարի նման էր, բայց փրփրելու և մաքրելու հատկություն ուներ: Լողացնելիս մայրը ձեռքը դնում էր երեխայի գլխատակին՝ գլուխը ջրից դուրս պահելով, մարմինն ընկղմելով ջրում, տատը (կամ տատմեղը) ձեռքով ջուր էր ցանում երեխայի մարմնին ու կամացուկ տրորում, ասպա գլխին ջուր լցնում և երկու ձեռքով տրորում, հարթեցնում երեխայի գլուխն այնպես, որ կտր լինի: Հետո «մշակում» էր ճակատը, որ հարթ ու գեղեցիկ լինի, ուղղում քիթը, մի ձեռքով բռնում մի թևից, մյուսով տրորում վիզը, որ կարճ չլինի, տրորում էր թևատակերը, ոտքերի սրունքները, ծնկներն ու թաթերը: Ապա մանկանը պատկեցնում էր փոյրի վրա՝ մի ձեռքով պահելով, մյուսով երեխայի թևերը զգույշ դնում էր մեջքին, ջուր ցանում, վերջում երեխայի ոտնաթաթերը միացնում, մի ձեռքով բռնում, գլխովայր կախում ու թափահարում, ասպա երկու ձեռքով բռնում վզից, երեք անգամ բարձրացնում՝ ասելով. «Յերգնավզից, թեովաջրից, պաթի-մամի բունը քեզի»: Լողացնելուց հետո ձեռած շիբը խառնում էին յուղի հետ, քսում մարմնին ու քարուրում: Տաշտից մի բուռ ջուր վերցնելով՝ խաչածև շաղ էին տալիս օրդուցի վրա՝ խաչակնքելով: Մինչև երեխայի քնելը տաշտի ջուրը չէին քափում՝ հավատալով, որ եթե ջուրը շարժվի, երեխան էլ կշարժվի, չի քնի: Որպեսզի երեխան երկար քնի, քառասունքից հետո ծնողները երեսները լվանում էին մանկան գլխավերևը՝ հավատալով, որ իրենց բունը նրան կփոխանցվի: Երկար քնելու համար ճկույթով ձեթը կաթացնում էին կրծքի կաթի մեջ և լցնում երեխայի բերանը: Երեխայի գլուխը, ճակատն ու աչքերը կապում էին չամբարով (գլխաշոր): Գլխաշորը եռանկյունաձև էր ու սրածայր, որը կապվում էր վզով ու հանգուցվում ծոծրակին: Մանկան աչքերը ծածկում էին, որպեսզի ծուռ չլինեին և նա չար բնավորություն չունենար, և քնած ժամանակ չար ոգիները չայցելեին նրան: Մի գլխաշոր էլ կապվում էր չամբարի վրայից: Ըստ ժողովրդական նախապաշարումների՝ այդ օրերին **բաջ-բերը**՝ չար ոգիները, շրջում են տան մեջ: Առաջին 40 օրը մանկան լվացած շորերը արևի տակ չէին չորացնում, այլ տան ներսում, որպեսզի նորածինը փորացավ

(սանջու, խիթ) չունենա: Ի դեպ, ծննդկանը 40 օր իրավունք չուներ արևի տակ դուրս գալու, առագաստ մտնելու՝ ամուսնու հետ սեռական կապ ունենալու: Այդ ամենը, ինչ խոսք, միտված էր կնոջ թուլությունը հաղթահարելուն, նվազած առողջությունը վերականգնելուն:

Հատուկ հմտություն էր պահանջում նաև երեխային բարուրելու արարողությունը: Պառկեցնելով բարուրաշորի վրա՝ պինդ փաթաթում էին, ուշադրություն էին դարձնում հատկապես թևերի ու ոտքերի ուղղածիզ դիրքին: Մինչև մեկ տարեկանը երեխային քնեցնելիս բարուրում էին, որ հանգիստ քնի:

Մանկանը բարուրում էին օրական երեք անգամ: Բարուրի փաթթոցաշորն ամբողջությամբ կոչվում էր **փաթթոց-բնդոց**, որի մեջ մտնում էին՝ դունդ (բարուր) շորը՝ մեծ շորը, որի վրա փռվում էր **բարշորը**, սրա վրա լցվում էր սև խարկած հող՝ գուլ վիճակով, իսկ վերջինիս վրա գցվում էր բարակ շոր, որ կոչվում էր **հողշոր**: Սրանք միասին կոչվում էին **փակաշոր**: Երեխան փորացավ ունենալիս և ազդրելը հարվելիս նույն հողից շորի մեջ փաթաթած դնում էին փորի վրա և ազդրերի արանքը, որպեսզի հողը իր մեջ քաշեր հիվանդությունը: Խարկած հողի առողջարար լինելու մասին գիտեին նախնիների կենսափորձից: Խարկած հող մանկան տակին դնելիս մեզի ծորաններ չէին օգտագործում: Փաթթոցի պարագաներն էին նաև թևաշորը, տակի շորը, որը գցում էին երեխայի տակ դրված դմփիկի վրա, և օրոցկապը՝:

Մանկան խանձարուրի բաղադրիչն էր **կոռը**՝ բարուրի տակաշորերը: Կոռները բոված հողով քիչ տաք վիճակում ծածկում էին, որ խոնավությունը քաշեր, երեխային տաք պահեր, մանավանդ աղջկան, որի մեզը միշտ կոռոցների վրա էր քափվում: Տղաներին **ջուջփեղն** օգնում էր, դրանով նա միզում էր առանց փաթթոցները թրջելու: Ջուջփեղը մոտ 50 սմ երկարությամբ խողովակաման հարմարանք էր, որի մի ծայրը լայնաբերան էր: Նեղ ծայրը օրորոցից ներքև էր իջեցվում: Այն դրվում էր երեխաների ոտքերի արանքում, շորով փաթաթվում, որպեսզի մեզը չթափվեր, մի առանձին շոր էլ դնում էին ոտքերի արանքը՝ ազդրերը չհարվելու համար: Երկարալ շորը **փուրթկն** էր (փաթաթան), որ գոտկատեղից մինչև վիզն էր հասնում: Երկարալ **օրոցկապն** էր, որ փուրթկն ու կոռոցները կապում, ամրացնում էր օրորոցին և ինքն էլ թելերով ամրացվում օրորոցի կամարին: Օրոցկապը բաղկացած էր ճիպոտից՝ օրորոցի լայնությամբ, որի ծայրերին խազեր էին արվում և գույնզգույն թելեր կապվում, երկու ծայրերից երկու ճյուղով թել էին ամրացնում, որով կապվում էր մանուկի բարուրը **օրորոցափեղից**՝ օրորոցի երկու կամարները միացնող փայտից: Օրոցկապը երեխային ձիգ էր պահում: Բարուրը կապում էին կրծքի մասից և փորի տակից այնքան ամուր, որ, բանասացի խոսքերով, ժայռից էլ գցելիս, երեխան օրորոցից չէր պոկվի: Օրորոցը ներկում էին կապույտ կամ կարմիր: Բարձր պատրաստվում էր բամբակից, բարձի երեսը կապույտ կտորից էր: **Փորքաշը** կոչվում էր **օրուցկապ**: Օրորոցի երկարալ տեսակը **ճորթն** էր, որը կապում էին երկու սյուներից կամ մահճակալների գլուխներին: Չար աչքից խուսափելու նպատակով և ծննդկանին ու նորածնին չարքերից հեռու պահելու համար բարուրի շորջը ամրացնում էին սև այծի մազից հյուսված պարան, որը մնալու էր մինչև մոր ու մանկան քառասունքը լրանալը: Օրական 3-4 անգամ երեխայի տակաշորերը փոխում էին, ամեն անգամ փոխելով նաև խարկած հողը:

Նորածնի օրորոցը կյանքի առաջին քառասուն օրը **ճոճն էր**՝ ճյուղը՝ անկողնուն կից հարմարեցրած: Հետո, երբ երեխան դառնում էր աշխույժ ու շարժուն, տեղափոխում էին օրորոց:

¹ Տե՛ս Ռ. Ա. Նահապետյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), տ. 15, էջ 46-50:

Նորածնի խնամքի մի մասն էր կազմում ծեսերի ու սովորույթների այն խումբը, որն առնչվում էր առաջին ատամը երևալու, առաջին անգամ եղունգներն ու մազերը կտրելու, առաջին անգամ քայլելու, ուշ խոսելը հաղթահարելու հետ:

Երեխան առաջին կաթնատամը հանում էր վեց ամսականից մինչև մեկ տարեկան դառնալը, որն ուղեկցվում էր հաճախակի լուծով: Լուծը կանխելու և փորագավը մեղմելու համար այդ մի քանի օրը շուտ-շուտ էին լողացնում:

Առաջին ատամը դուրս գալու առթիվ կատարվում էր հատուկ ծես, որին հրավիրվում էին ազգական-հարևաններ՝ իրենց փոքրահասակ երեխաներով, որոնք *ապամխասրիկ* կամ *ակոասորիկ* (Մատունում՝ հատկասորիկ, ատամսորիկ) կոչված խաշած ցորենի, ոսպի, սխեռի կամ կանեփի, լոբու, սպիտակ ձավարի հատիկներ, երբեմն նաև շամիչ, պնդուկ, փշատ ու կոնֆետ էին շաղ տալիս մանկան գլխին: Բաղեշում գլուխը ծածկում էին քաշկինակով, հատիկը լցնում գլխին՝ ասելով.

Ուրախությունով ատամհատիկ հլնի.

Ուրախությունով ատամ խանես

Բաղդավոր հլնես, հորով-մորով հլնես²:

Այդ միջոցին հավաքված մյուս երեխաները ուրախ բացականչություններով խլխլում էին ատամսորիկը:

Ատամհատիկը բաժանում էին հարևան-բարեկամներին, իսկ վերջիններից ստանում մրգեր, քաղցրավենիք, զգեստացու կամ պատրաստի հագուստ և այլն: Ատամսորիկ վերցնողը պարտավոր էր մաղթել. «Ուրախ ատամսորիկ լինի, գառան ատամի նման մանր, ջորու ատամի նման ամուր լինի»: Նմանողական մոգության սկզբունքով ակնկալում էին մանկան ատամները մույնպես մանրահատիկ դարձնել: Այդ նույն ծեսի պահին մանկան ապագա մասնագիտությունն ակնկալվող գուշակություններ էլ էին անում. ծնկների վրա դնում կամ շուրջը փռում էին տարբեր զբաղմունքներին վերաբերող առարկաներ, գործիքներ՝ մատնոց, մկրատ, դանակ, մուրճ, մատսնի, սպալաճան, սանր, դաշույն, գրիչ, խոփիկ, մքուք: Երեխան շուրջը փռած իրերից որ մեկը փորձեր վերցնել, այդ արհեստին էլ իբր տիրանալու էր: Այդ պահին կատարում էին հաջուրս՝ ծնվելիք երեխայի սեռը նյաշող արարողություն: Սավանի վրա էին նստեցնում մանկանը՝ մի կողմը սանր ու մկրատ, մյուս կողմը՝ դանակ ու գրիչ դնում: Եթե մանուկը վերցնել սանրն ու մկրատը, հաջորդը աղջիկ կծնվեր, եթե դանակն ու գրիչը՝ տղա³: Սովորության համաձայն՝ եթե նորածինը աղջիկ էր լինում, դնում էին մոր դիմաց, որ այլևս աղջիկ չծնվի, եթե տղա էր՝ քիկունքի կողմը՝ որ տղաներ ծնվեին⁴:

Երբ ընկնում էր մանկան *կաթնապամը*, այն պահում էին դռան *ծխանի* մեջ՝ ասելով. «Ա՛ռ շան ատամը, տո՛ւր գառի ատամը»⁵, «Ա՛ռ քեզ կաթի ակոա, տո՛ւր ինձ երկաթի ակոա», կամ «Ա՛ռ քեզ երկաթի ակոա, տո՛ւր ինձ ոսկի ակոա»: Խիան գավառում մանկան ատամները մանր, գեղեցիկ ու ամուր լինելու համար ընկած առաջին ատամը ջրհորն էին գցում, կամ մայրը դռան ծխանի տակ էր դնում՝ երեք անգամ դուռը տանում-բերում, փակում-բացում՝ հետն էլ նոր ատամի համար հարցնում էր ցանկությունը՝ երեք անգամ ասելով. «Մանտր-մանտր գեց (նման՝ Ռ. Ն.) գառան, ամպուր-ամպուր գեց ջորուն»:

Մատունում ընկած կաթնատամը տանում էին գոմի պատի մեջ դնում՝ «գառի նման մանր լինի, ջորու նման խայիմ լինի» ասելով:

² ԴԱՆ, տ. 2, էջ 166:

³ Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 129:

⁴ Տե՛ս «Մասիս», 1885, քիւ 1757, էջ 757:

⁵ ԴԱՆ, տ. 2, էջ 171 տե՛ս նաև «Բիւրակն», 1898, քիվ 20, էջ 396-397:

Հավատում էին, որ ծնողներին փորձանք կապասվեր, եթե մանկան առաջին ատամը դուրս գար վերևի լնդից: Այդպիսի երեխան չարագուշակ, գլխակեր էր համարվում: Բախտավոր երեխա դարձնելու նպատակով նրան որոշ բարձրությունից զլորում էին իր անկողնու վրա⁶:

Տղա զավակի գլխի մազերը առաջին անգամ մկրատով խուզելիս պահպանում էին դրա հետ կապված ավանդական մի սովորության, ըստ որի՝ երեխայի գլխին սանր չպետք է խփել, մինչև նոր ատամ հանելը, որովհետև սանր գործածելուց ատամները լավ չեն բուսնում⁷:

Հավատացած լինելով, որ ս. Սարգիսն իր ծիու պոչը խուզում էր Առաջավորաց պատի չորեքշաբթի օրը, այդ նույն օրն էլ առաջին անգամ խուզում էին մանկան մազերը: Առաջին տարում չէին խուզում մազերը՝ վախենալով, որ նա չարքերից վնաս կստանա: Արգելվում էր կտրված մազերը թափել գետին, դնում էին տան պատի մի ճեղքում, որպեսզի տերը գլխացավ չունենար⁸: Այն ծնողները, որոնց երեխաները չէին ապրում, մանկանը մնացական դարձնելու հույսով մազերը չէին խուզում մինչև յոթ տարեկան դառնալը: Կտրելու օրը մատաղ էին անում այն սրբավայրում, որի անունով խոստացել էին գոհ մատուցել: Եթե տղան միակն էր, ուխտ էին անում նրա մազերը Մշո սուրբան ս. Կարապետի վանքում կտրել: Այդպիսի երեխայի մազերը յոթ տարի չէին խուզում, աղջկա նման ծամել էին հյուսում, ժապավեն կապում: Յոթ տարին լրանալուց հետո վանքի վարաավիրին էին հրավիրում: Վերջինս մազերը կտրում էր շորի վրա՝ գետնին չթափվելու համար, և վանքի կշեռքով կշռում. մյուս նժարին դնում էին այնքան դրամ, որքան կշռում էին մազերը: Դրանը բարեգործական նպատակով տալիս էին վանքին: Առաջին կտրված մազերը պահում էին: Կտրված մազերը թաքցնում էին նույն սրբատեղիի պատի մեջ⁹: Կամ էլ մայրը պարտավոր էր այդ մազերը պահել զաղտնի մի տեղ, ուր ձեռք ու ոտք չլիպչեր¹⁰:

Հավատում էին, թե իբր մանկանն անդրաշխարհում տեղով կապահովելին, եթե առաջին անգամ կտրված եղունգները հորեն գետնի կամ պատի ճեղքերի մեջ խնամքով ծրարված ձևով: Հակառակ դեպքում «ահավոր օրվան մեջ մեր աչքի կուպիչներով հավաքել պիտի տան մեզի»: Հավատում էին նաև, որ մանկան եղունգները հրեշտակն է կտրում, այդ պատճառով էլ մինչև 3 տարեկան դառնալը դանակ չէին կպցնում նրա եղունգներին: Եղունգները կտրելիս հավաքում և, կտավի մեջ փաթաթելով, գլխի վրայով դեն էին շարտում՝ ասելով «Դատաստանի օրը եկեք գտեք ինձ»: Դրանք չէր կարելի կրակը գցել, այլապես «Դատաստանի օրը» եղունգն իրենցից վրժ կլուծեր: Սղերդի հայերը հավատում էին, թե «ով որ պահված եղնգներու ծրար մը բանա, անոր տիրոջ ցավերեն կվարակվի»¹¹:

Ուշ ոտքի ելնող կամ ուշ խոսող մանկանը դնում էին մաղի վրա և յոթ տնից լռելյայն հաց էին խնդրում և կերցնում երեխային, կամ էլ տանում էին որևէ սրբատեղ, որտեղ մի գերեզմանի շուրջը գարի էին շաղ տալիս և ապա, ցանած տեղն ավելելով, երեխային պտտեցնում էին այդտեղ, կամ էլ չորքալերու համար շորով փաթաթած սխտոր էին կապում երեխայի վզից¹²: Ուշ քայլող մանկան ոտքերի բուք

⁶ Տե՛ս «Բիւրակն», 1898, քիւ 31, էջ 396:

⁷ Տե՛ս Ե. Կարապետյան, Սասուն (ազգագրական նյութեր), Եր., 1963, էջ 97:

⁸ Տե՛ս Ս. Ն., Նախապաշարուններ և սովորութիւններ Սղերդի մէջ ու շրջակայքը, «Բիւրակն», 1899, քիւ 38-39, էջ 614-615:

⁹ Տե՛ս Յ. Տոտուխեան, Գատակական սովորութիւնը, «Մասիս», 1885, քիւ 3773, էջ 1094-1095:

¹⁰ Տե՛ս ԴԱՆ, տ. 11, էջ 81-82:

¹¹ Ս. Ն., Նախապաշարուններ և սովորութիւններ Սղերդի մէջ ու շրջակայքը, «Բիւրակն», 1900, քիւ 17, էջ 262:

¹² Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 128-129:

մատները երեք անգամ կարմիր թելով կապում ու կտրում էին, որպեսզի նրա ոտքերը բռնող թելն էլ կտրվի, և նա քայլի: Որոշ դեպքերում յոթ տնից հաց էին հավաքում. երբ մանուկն այդ հացը ուտեր, ոտքի կկանգներ:

Հարք գավառում, ուշ քայլող երեխային մաղի վրա դրած, յոթ տուն էին մտնում՝ հացի *կույր* խնդրելու՝ մանկանը ուտեցնելու համար, ասելով.

Կույր մէ Կվէք մեր կուսան (երեխային կուտի նմանեցնելով)
*Ելնա կանի վրը Կոսրան*¹³:

Երեխային առաջին անգամ քայլելու փորձ անելու և քայլել սովորեցնելու համար որոշ հեռավորության վրա շաքար, միրգ, խաղալիք էին դնում՝ նրան հրապարելով: Շուտ քայլելու համար գործածում էին *ճոխկ* կամ եռանիվ սայլակ՝ «գոնել»:

Ուշ խոտող երեխայի բերանը «բացում» էին եկեղեցու խաչը կամ 7 եկեղեցիների բանալիներ բերանի մեջ պտտելով, կամ մաղի վրա դրված երեխային տանում էին յոթ տնից տուն՝ հաց խնդրելով և նրան ուտեցնելով: Բաղեշում յուրաքանչյուր տուն մտնելիս ասում էին. «Ոտքն երկեր է, լեզու կուզէ»: Առաջին նորածին երեխայի խուլ և համր լինելը կանխելու նպատակով դեռևս առագաստի՝ *մեղդալուսի* համարվող գիշերը Սղերդում տան անդամներից մեկը գաղտնի ականջ էր դնելու հարս ու փեսայի խոսակցությանը¹⁴: Կամ՝ մայրը խմորոտ ձեռքերը լվալով՝ ջուրը խմեցնում էր մանկանը՝ խոսեցնելու համար, հաճախ էլ սրբավայր էին տանում՝ այնտեղ *խաչխամբուր* տալով: Ջյուտբերան երեխայի փալիճքը վերացնելու համար մանկան բերանը քսում էին քափորի բերանին, կամ քավորը ճկույթը թաթախում էր երեխայի բերանում¹⁵: Լավկան երեխայի գլխատակը դնում էին նապաստակի ականջներ:

Սղերդում պահպանված նախապաշարումների համաձայն, եթե կաթը քաշված ծիծը երեխային տային, ստախոս կդառնար, կամ ապրող զավակից հետո, եթե ծնվածները չապրեին, առաջինը նախանձոտ կդառնար, ուստի նրա կրունկն այրում էին, որ նախանձը փարատվեր¹⁶:

Մանկան պաշտպանության և խնամքի մեջ էր մտնում հուռույթներով ապահովելը: Բառասունքը լրանալուց հետո նրան տեղափոխում էին օրորացի մեջ: Չար աչքից հեռու պահելու միտումով օրորացի կամարից կախում էին բազմապիսի խաղալիք-հուռույթներ, պահպանակներ՝ *չարոց ուլիճ* կամ *աչքաուլիճ*, դրանցից մեկը Բաղեշում սալքում էին *կերթե* (սարի) ծամոնից և ոսկե բարակ, կոճականման թիթեղից: Այն սովորաբար կապույտ էր լինում: Մեկ այլ տեսակ էլ լինում էր սև սաթից՝ *սիլան*, կարմիր սաթից՝ *մրջան* ուլիճ¹⁷: Երեխային հանգիստ քուն տալու համար «*քնհյուն*» (քնաբեր ուլոնք) էին կախում վզից: Կախում էին նաև պղնձե զանգուլակ և ոչխարի 40 ճան: Աչքաուլիճը երբեմն կախում էին երեխայի ճակատից՝ մազերից: Մանկան բարձի տակ պահում կամ զգեստի թևին կարում էին *օջի շապիկ*, *չկան ականջ*, *չկան խաչաչև ոսկոր* և *պաշյր*: Բախտավոր մարդու մասին ասում էին, թե ձկան խաչ կա ճակատին: Հայտնի է, որ ձուկը, որպես ջրային տարերքի ներկայացուցիչ, դեռևս շատ վաղ ժամանակներից հին Արևելքի տարբեր ժողովուրդների մեջ, բացի չարխափան նշանակություն ունենալուց, համարվել է

¹³ Բենսէ, Բուլանըխ կամ Հարք գաւառ. Ամուսնութիւն եւ հարսանիք, Ազգագրական հանդես, գ. Ե, Թիֆլիս, 1889, էջ 133:

¹⁴ Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 171-172:

¹⁵ Տե՛ս Ս. Ն., Նախապաշարումներ և սովորութիւններ Սղերդի մէջ ու շրջակայքը, «Բիւրակն», 1899, թիւ 29, էջ 456, ԴԱՆ, տ. 2, էջ 132-133, 146, 180:

¹⁶ Տե՛ս Ս. Ն., Նախապաշարումներ և սովորութիւններ Սղերդի մէջ ու շրջակայքը, «Բիւրակն», 1900, թիւ 21, էջ 315:

¹⁷ Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 132-133, 146:

բեղմնավորման խորհրդանիշ, սիրտ ու պտղաբերության մայր աստվածությունների ուղեկցորդ¹⁸: Աղջիկ երեխայի օրորոցից կախում էին նաև իզանդամաձև *ծմբուկ* (խխունջի պատյան), տղայի օրորոցից՝ արական անդամի ձև ունեցող *ծմբուկ*: Մեծ ծմբուկը կախում էին օրորոցից, իսկ փոքրը՝ կապում նորածնի թևին: Խխունջներին ևս վերագրվում էր բուժիչ և պահպանիչ հատկություն: Կ. Կուչնարյուովայի կարծիքով, ողջ Առաջավոր Ասիայում խխունջները մոզական նշանակություն են ունեցել¹⁹: Ծմբուկ էր կոչվում նաև լողացնելիս նորածնի մեջքը մերսելու ժամանակ առաջացած մազավունջը, որը նույնպես օգտագործվում էր մանկան ծմբկապելը (մարմնի թուլությունը, կոտրատվելը) վերացնելու և չարը հալածելու համար՝ որպես *աչքուլունք*:

Հոռոտների կարգին էին դասվում նաև մանուկների հագուստներին կարվող պահպանակները՝ կապույտ ուլունքը, կիսալուսնաձև արծաթե կամ ոսկե *նորը* (նորալուսնաձև): Աղջիկ երեխայի հագուստի վրա կարվում էր նաև էգ գայլի չորացված ամոթույքը, հավատարով, թե այն կբախտավորեցնի կրողին²⁰, քանզի տարածված ապույթ կար բախտավոր կանանց վերաբերյալ, թե «գելի ամոթք կա դրանց վրան»²¹: Սասունում մայրերը իրենց փոքրահասակ տղաների թիկունքը հաճախ դրամներով, կոճակներով, ուլունքներով ու խայտաբղետ ծուպերով էին զարդարում: Մորն ու մանկանը *չարքերից* զերծ պահելու նպատակով սև այծի մազից պարան էին հյուսում և եկեղեցում պատարագի ժամանակ օրհնել տալուց հետո կապում նրանց մահճակալի, այնուհետև օրորոցի շուրջը: Մանկանն առանձին թողնելիս տանը թե դաշտում բարուրի կոճքին հաց (կամ նշխարք հաց) էին դնում՝ երկյուղելով, թե իբր «մեզմե աղեկներ» կոչվող չար ոգիներն ընդունակ էին նրան փոխել իրենց տգեղ զավակով²²:

Օրորոցի երեխաների բարձի տակ գիշերները մի կտոր հաց էին դնում և առավոտյան շանն էին տալիս՝ վախից և չարքերից պաշտպանելու համար: Եթե օրորոցում երեխաները անհանգիստ էին լինում, չէին քնում, նրանց զխի տակ ուղտի բուրդ կամ օձի շապիկ էին դնում, իսկ չար աչքից զերծ պահելու համար կապույտ հագուստ էին հագցնում: Կապույտն ընկալվել է որպես «մութ» գույն և օգտագործվել զանազան հմայական գործողություններում՝ հանդես գալով որպես պահպանակ: Այդ գույնին էին դիմում հատկապես «թաղոտ» կանայք: Արգելվում էր աղջիկ երեխային տղայի զգեստներ հագցնել: Հավատում էին, որ եթե աղջկա զխին տղայի զխարկ դնեին, մազերը կթափվեին:

Նորամանուկին չարքերից հեռու պահելու և մնացական դարձնելու նպատակով դիմում էին զանազան մոզական միջոցների օգնությանը: Քահանան, սև հավի արյունով ու փետուրով զինված, Ավետարան էր կարդում և երեք տեղով «գիր ու թուղթ» անում մատաղ արված ոչխարի ոսկորների կտորների վրա՝ այն կոչելով *չարքոց թուղթ*: Վերջինիս մեկ օրինակը, մեղրամոմով պատած, կապույտ թղթի և կապույտ կտորի մեջ եռանկյունաձև հմայիլ անում, թաղում էին տան շեմի տակ, երկյուղող՝ կնոջ ծննդաբերած տեղում, երրորդը պահում էին մանկան բարձի տակ: Հետագա տարիներին չարքոց թուղթն ամրացնում էին մանկան հագուստի վրա՝ աջ թևին, կամ պահում բարձի տակ՝ մինչև նրա յոթ տարին լրանալը:

¹⁸ St'u E. G. Карагов, Культ фетишей, растений и животных в древней Греции, СПб., 1913, էջ 302:

¹⁹ St'u E. G. Кушнарева, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, «Советская археология», 1957, N 27, էջ 302:

²⁰ St'u ԴԱՆ, տ. 2, էջ 164, 186:

²¹ ԴԱՆ, տ. 2, էջ 181:

²² St'u ԴԱՆ, տ. 2, էջ 149-150, 155:

Այդ նույն նպատակով մատաղի մանրացրած ոսկորի փոշին շաղ էին տալիս կրակի վրա և մանկան դեմքը պահում նրա ծխին²¹, կամ մանկան մայրը յոթ տնից տարբեր գույնի կտոր էր խնդրում, երեխայի համար շապիկ կարում և հագցնում յոթ տարի շարունակ²⁴, կամ ս. Կարապետի և այլ սրբերի անուններով մատաղ էին խոստանում և զոհաբերության ժամանակ յոթ տարի «ծոմ ու պաս» պահում, կամ էլ նույն սրբավայրում մանկանն անց էին կացնում երկու խաչքարի միջով²⁵:

Չար աչքից պաշտպանելու և ակնահարվածին բուժելու նպատակով հացն ու ասեղն աղոթում էին, հացը տալիս շանը, իսկ ասեղը՝ շուլարում *աչք սասած* մանկան շորի վրա: Եվ ումից որ կասկածվում էր, ձգտում էին ծածուկ ձեռք բերել նրա շորերից մեկը և այրել մանկան ոտքերի տակ: Երեխայի վայր ընկած տեղը սեպ էին գանում, որպեսզի չարքը գամվեր տեղում և մանուկն անփորձանք մնար²⁶:

Խուլթիկ գյուղում եթե մանուկը որևէ բանից վախեցած լիներ, կանչում էին *վախ բռնողին*, որ աղոթի. աղոթքի ժամանակ վերջինս աղ ու հացը ձեռքին մրմնջում էր. «Թի սև կովուց ա, թի սև իշուց ա, թի դրից ա, թի դրկցից ա, թի սև ծովուց ա, թի սպիտակ ծովուց ա, չար աչն ի փուշ, փուշն ի կրակ, մեռելի քթով խողն ի յաչ», ու շնչում էր հիվանդի երեսին²⁷:

Հավատալիքի համաձայն՝ լուսինը իրեն պատշաճ հարգանք չցուցաբերող մայրերի գրկանոց երեխաներին վնաս էր հասցնում, որը հայտնի էր *նոր ստնել* կամ *նորոց լինել* ձևերով: Ուստի մանկան շորը լուսնի դեմ չէին փռում, «մեղք» էր համարվում²⁸: Այդպիսի մանկանը բուժելու նպատակով մայրը բարյուրը տանում էր հարևանի տուն՝ տան առաջմեկ տղայի ձեռքով մանկան ճակատին, այտերին և կրծքին ու ձեռքերին կաթսայի մրով խաչեր անելու: Նույնը կատարում էին Տյառն-ընդառաջի կրակի մոխրով²⁹: Նորապսակներին, ամուրի տղաներին և նորածին մանուկներին պտտեցնում էին Տյառնընդառաջի խարույկի շուրջը՝ մեծերին պտղաբերական բարձր ունակություն և մանուկներին երկարակեցություն հաղորդելու ակնկալությամբ: «Տյառնընդառաջի օրվան իրիկվա ժամերգության մեկ-մեկ փոքրիկ մոմեր կվառեն և, շատ զգուշությամբ պահելով, ուղղակի իրենց տները կտանեն, որ այդ մոմերով իրենց զավկներուն գլխի ֆեսետյուն ներքին կողմը գրեթե կադրուկեն, որպեսզի այդ գիշեր *Ֆշոռ* անունով դևն (չարքը) արգիլեն, եթե ո՛չ, նույն ֆշոտ դևն կուգա այդ գիշեր և իր զավակներուն կվնասի»³⁰: Չար աչքի չգալու համար գրպանի մեջ «պճեղ մը սխտոր կը ձգեն և երեխաներու հագուստներու հետևը ուլունքներ կկարեն»³¹:

Որոշ վայրերում մանկան շուտ-շուտ հիվանդանալու պատճառը համարում էին *նորը* (լուսնի հարվածը), որը բուժելու համար երեխային տանում էին ներկարարի արհեստանոցը, որտեղ վերջինս բերված մոմերը շարում էր լեղակի կարասի բերանին, վառում և երեխային պահում էր լեղակի կարասի վրա, որ հուտ քաշի, ապա մայրը մատը թաթախում էր լեղակի մեջ և քսում մանկան ճակատին, քթին, աչքերին: Դրանով, իբր, չարը խափանվում էր:

²¹ Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 158:

²² Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 186:

²³ Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 167:

²⁴ Տե՛ս «Բիւրակն», 1900, թի 21, էջ 315:

²⁵ Տե՛ս «Մասիս», 1885, թի 3766, էջ 226-227:

²⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 344-346:

²⁷ Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 148:

²⁸ «Բիւրակն», 1899, թի 18, էջ 280:

²⁹ Նույն տեղում:

Մղերդում ևս, սովորույթի համաձայն, պահում էին Տյառնընդառաջի կրակի մոխիր, որպեսզի նորի նախորդ օրը ուղի ճյուղերով սևացնեն մանկան ճակատը, քիթը՝ խաչ անելով: Երբ լուսինը երեք օրվա ծնված էր լինում, երեխան նոր էր լինում: Այդ դեպքում արգելվում էր ծնողների մոտենալը մանկանը կամ չպետք է մոտեցնեին նրանց շուրթեր: Դրա համար արծաթյա դրամ էր կտրվում նորածն՝ որն էլ կոչվում էր *նոր* և Ավագ հինգշաբթի օրը նախօրոք օրհնվում էր պատարագի ժամանակ: Այն կարում էին մանկան թեքին կամ կախում օլորոցից³²:

Մանկան խնամքի իրական և ոչ իրական միջոցներն ու հնարները, անշուշտ, կարելի է դեռ երկար թվարկել, սակայն, կարծում ենք, այսքանն էլ բավարար է՝ պատկերացում կազմելու խնդրո առարկայի շրջանակներում հայ ժողովրդի մի հատվածի ազգային յուրահատուկ նկարագրի մասին:

Այսպիսով, աղձնիքահայերի ընտանեկան համալիրում առանձնակի կարևորություն ունեին նորածնի խնամքին ու դաստիարակությանը վերաբերող խնդիրները: Ազգագրական բավականին ուշագրավ այս հարցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ավանդական հայ ընտանիքում նորածնի խնամքին առնչվող արարողություններն ու միջոցառումները, որոնցում խտացված են ժողովրդի դարավոր կենսափորձը, հավատալիքներն ու պատկերացումները, միտված էին առողջ սերունդ ունենալուն:

Р. А. НААПЕТАН — Обычаи, связанные с заботой о новорожденном, в семьях армян Ахдзника. — В семейном комплексе армян области Ахдзник Западной Армении особую важность придавали проблемам ухода за новорожденным, его роста и воспитания. Изучая соответствующий этнографический материал, автор статьи приходит к выводу, что принятые в традиционной армянской семье ритуалы и меры по уходу, заботе о новорожденным, вобравшие в себя вековой жизненный опыт, верования и представления народа, однозначно имели целью взрастить здоровое и жизнеспособное поколение.

³² Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 164: